ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1921-1922 ԹԹ.*

Գրիգոր Բալասանյան

1918 թվականի մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը լուծարվեց և մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը անմիջական հարևանների հետ հարաբերությունների կարգավորումն էր: Պատմականորեն ձևավորված և ցարական տիրապետության ժամանակներից ժառանգություն մնացած ազգային տարածքային-սահմանային և այլ վեճերի պատճառով փոխադարձ անվստահություն կար Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ հարաբերություններում: Հայ-վրացական բարեկամական սերտ հարաբերությունների հաստատմանը խոչընդոտում էին տարածքային-սահմանային վեճերը: Վրաստանը ձգտում էր իր կազմում պահելու Լոռու և Ախալքալաքի հայկական գավառները, որոնք Ռուսական կայսրության իրականացրած ոչ ճիշտ վարչատարածքային բաժանման հետևանքով մտել էին Թիֆլիսի նահանգի մեջ[1]: Այդ վեճերի արդյունքում 1918 թվականի դեկտեմբերին տեղի ունեցավ կարճատև հայ-վրացական պատերազմ: Հարցը լուծելու համար 1919 թվականի հունվարի 9-17-ը Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված հայ-վրացական հաշտության կոնֆերանսում Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի», որի մեջ մտնում էին Բորչալուի գավառի Ալավերդու, Ուզունլարի, Վորոնցովկայի շրջանները:

Կոնֆերանսից հետո Հայաստանի և Վրաստանի միջև բնականոն միջպետական հարաբերությունները վերահաստատվեցին, Թիֆլիսում իր գործունեությունը վերսկսեց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, տարածքային հարցերի վերջնական լուծումը տեղափոխվեց Փարիզի խաղաղության վեհաժողով: 1919թ. մարտի 8-ին Հայաստանը վերաբացեց իր դիվանագիտական ներկայացուցչությունը Թիֆլիսում և Ա. Ջամալյանի փոխարեն դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվեց Ա. Թումանյանը: Դրանից հետո միայն հունիսին Վրաստանը Գ. Մախարաձեին նշանակեց Հայաստանում Վրաստանի դեսպան[2]:

1920 թվականի գարնանը Հայաստանում իշխող իրավիճակի, հայ-վրացական փոխհարաբերությունների մասին մենք տեղեկանում ենք Հայաստանի Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի նամակից, որը նա ուղարկել է Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին: Նա նամակում գրում է. «Վրաստանի հետ դեռ մեր հողային վեճերը վերջացած չեն, բայց մենք ներկայումս ոչ մի հակամարտություն չունենք վրացիների հետ»[3]:

1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, և Հայաստանի առաջին հանրապետության տարածքային հիմնախնդիրները փոխանցվեցին Խորհրդային Հայաստանին: Խորհրդայանացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց Լոռու չեզոք գոտու խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Հայ-վրացական տարածքային վեճերը ձեռնտու էին Ռուսաստանին, և Մոսկվան կարող էր

---

* Հոդվածն ընդունվել է 28.04. 2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.թ., դոցենտ Մ. Վարդազարյանը:

նրանց օգնությամբ Վրաստանում հաստատել խորհրդային կարգեր: Ծրագրվեց Լոռիում բարձրացնել ապստամբություն և միավորել այն Հայաստանի հետ: 1921թ. փետրվարի 11-ին Հովսեփ Լազյանի գլխավորությամբ ապստամբություն բռնկվեց, որը տևեց 3 օր: Փետրվարի 15-ին Լոռին ազատագրվեց և մարզում հաստատվեց խորհրդային իշխանություն: Նույն օրը Լազյանը 11-րդ Կարմիր բանակի և Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը հեռագրեց այն մասին, որ մարզում հաստատվել է խորհրդային իշխանություն և վրացական բանակի մնացորդները գերեվարված են[4:] Ռազմական գործողությունների ավարտից հետո վրացական կառավարության անունից Նոյ ժորդանիան դիմեց խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գեորգի Չիչերինին՝ պահանջելով դուրս բերել ռուսական զորքերը և խնդիրը կարգավորել բանակցությունների միջոցով[5]: Այն, ինչ չհաջողվեց անել Հայաստանի առաջին հանրապետությանը, իրականացրեց Խորհրդային Հայաստանը՝ Լոռին ընդգրկվեց Հայաստանի կազմի մեջ:

1921 թվականի հուլիսի 7-ին Թիֆլիսում գումարված ՌԿԲԿ կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի նիստը, որին մասնակցում էին Ստալինը, Օրջոնիկիձեն, Կիրովը, Նարիմանովը, Մյասնիկյանը, Վրաստանի արտգործնախարար Սվանիձեն և Հայաստանի արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանը, որոշեց Լոռու չեզոք գոտին թողնել ՀՍԽՀ կազմում: Վերջնական որոշումը կայացվեց 1921 թվականի նոյեմբերի 6-ին Թիֆլիսում Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանի և Վրաստանի հեղկոմի հախագահ Մդիվանու կողմից: Լոռին, բացառությամբ Հյուսիսային Լոռու մի շարք հայկական գյուղերի՝ Աղ-Քյորփի, Օփրեթ, Խոժոռնի և այլն, մնաց Խորհրդային Հայաստանին, Ախալքալաքի, Ջավախքի հարցը լուծվեց հօգուտ Վրաստանի:

1921-1922թթ. քաղաքական հարաբերություններից բացի գոյություն ունեին նաև ակտիվ առևտրատնտեսական հարաբերություններ: Նշենք նաև, որ Վրաստանում դեռևս 1920 թ. դեկտեմբերի 27-ին Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ էր նշանակվել Դանուշ Շահվերդյանը: Այդ մասին հայկական կողմը հատուկ նամակ էր ուղարկել Վրաստան[6]:

Հայաստանի համար Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելը կարևոր էր այն առումով, որ ՀՍԽՀ իշխանություններն այլ երկրների հետ ապրանքափոխանակության համար կարող էին օգտագործել Վրաստանի սևծովյան նավահանգիստները և բեռները առանց դժվարության տեղափոխել Երևան: Վրաստանի հետ հարաբերություններն ակտիվացան միայն 1921 թ. փետրվարից հետո, երբ այնտեղ հաստատվեցին խորհրդային կարգեր: Մինչ այդ վրացական իշխանություններն անընդհատ արգելքներ էին հարուցում և թույլ չէին տալիս՝ իրենց տարածքով անցնի Ռուսաստանից և Ադրբեջանից դեպի Հայաստան ուղարկվող հացահատիկը և այլ առաջին անհրաժեշտության բեռներ: Վրաստանի իշխանությունները իրենց այդ քայլը պատճառաբանում էին այն փաստով, թե իբր երկաթուղային գծերի վրա ծյան հաստ շերտի առկայության պատճառով հնարավոր չէ կազմակերպել երկաթուղու աշխատանքը դեպի Հայաստան, սակայն սրան անմիջապես հետևում է ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Բեկզադյանի առաջարկը՝ թույլ տալ, որպեսզի հայերն անցնեն Վրաստանի հողը՝ ծյան շերտերը մաքրելու համար[7]:

1921 թ. հունվարի 12-ին ՀՍԽՀ արտգործժողկոմ Ա. Բեկզադյանը հեռագիր է ուղարկում Վրաստանի դեմոկրատական հանրապետության արտաքին գործերի նախարարություն, որով բողոք է հայտնում այն մասին, որ Վրաստանը արգելում է իր տարածքով Հայաստանի համար բեռների փոխադրումը: Նա նշում է. «Ադրբեջանում մեր ներկայացուցչի հաղորդագրության համաձայն այնտեղ Հայաստանի համար պատ-

ռաստ կանգնած են հացահատիկով և վառելիքով բեռնված վագոններ: Սակայն մինչև հիմա Ձեր կառավարությունը չի տվել իր համաձայնությունը այդ վագոնները Վրաստանի տարածքով անցկացնելու համար: Չնայած նրան, որ Ձեր կառավարությունը դեռևս 1920 թ. դեկտեմբերի 4-ին պաշտոնապես հայտնել է Վրաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Շեյմանին այն մասին, որ տրամադրում է ՌՍՖԽՀ-ին և Հայաստանին տրանզիտի իրավունք իր տարածքով Հայաստան բեռներ փոխադրելու համար»: Ա. Բեկզադյանը նաև ավելացնում է, որ փաստորեն Վրաստանը Հայաստանին պարենային շրջափակման է ենթարկել: «ՀՍԽՀ կառավարությունը իր վճռական բողոքն է հայտնում այդ առթիվ և Ձեզնից սպասում է կոնկրետ քայլերի» [8], - վերջում եզրափակում է Ա. Բեկզադյանը:

1921 թ. հունվարին Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Դ. Շահվերդյանը հեռագրում է Հայհեղկոմին, որ Վրաստանը համաձայն է պարենով բեռնված մեկ գնացք Ադրբեջանից բաց թողնել Հայաստան, բայց վառելիքի հարցում «կտրականապես մերժել է»: Նա հայտնում է, որ Վրաստանի արտգործնախարար Սաբախտարաշվիլին դա «կապում է Ադրբեջանի կողմից Վրաստանին վառելանյութ բաց չթողնելու հետ»[9]:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ շատ հաճախ Վրաստանի կենտրոնական իշխանությունների հրահանգները չէին կատարվում տեղական վրացական չինովնիկների կողմից: Դրա վառ օրինակ է հանդիսանում Վրաստանից Հայաստան եկող գնացքի կոմենդանտի հեռագիրը, որը նա 1921 թ. հունվարի 30-ին ուղարկել էր Վրաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանին: Հեռագրում նշվում էր, որ Հայաստան եկող իր ղեկավարած գնացքը բերում էր 12 վագոն ցորեն, գարի, բրինձ և զանազան այլ ապրանքներ: Սակայն Շահալի կայարանի ղեկավարությունը հրաժարվել էր բաց թողնել 3 վագոն՝ չտալով ոչ մի բացատրություն և դրանով խախտելով տրանզիտի վերաբերյալ հայ-վրացական պայմանավորվածությունները: «Խնդրում եմ Ձեզ անհապաղ միջամտելու երեք վագոն ապրանքը բաց թողնելու համար» [10], - գրված է հեռագրի վերջում:

Այս խնդրի վերաբերյալ Դանուշ Շահվերդյանը հետևողականություն է ցուցաբերում, և միջադեպը հարթվում է: Վրացական կողմը համաձայնում է վերադարձնել առգրավված 3 վագոն ապրանքը: Այդ մասին տեղեկանում ենք Շահվերդյանի կողմից 1921 թ. փետրվարի 15-ին Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Աթաբեկյանին ուղարկված հեռագրից: Նշվում էր, որ Շահալիում կանգնեցված երեք վագոն ապրանքը բաց է թողնվել և որ Թիֆլիսում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունը անում է հնարավոր ամեն ինչ՝ ապագայում այլևս նման բաներ չկրկնվելու համար[11]:

Թիֆլիսում լիազոր ներկայացուցչությունից բացի ՀՍԽՀ-ն հյուպատոսարաններ ուներ նաև Բաթումում և Սուխումում: Հատկապես ակտիվ էր Բաթումի հյուպատոսարանը: Այնտեղ էր գտնվում նաև Հայաստանի տնտեսական ներկայացուցչությունը: Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությունը տնտեսական կապեր էր հաստատել Բաթումում գործող «Կովկաս» առևտրային ընկերության հետ, և վերջինս ՀՍԽՀ իշխանությունների պատվերով երկրին անհրաժեշտ ցանկացած ապրանք գնում էր արտասահմանից և տեղափոխում Բաթում, որտեղից էլ Հայաստանի իշխանությունները կազմակերպում էին այդ բեռների տեղափոխությունը Հայաստան[12]:

1922 թ. հունվարի 30-ի Բաթումում ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչի գրությունում մանրամասն ներկայացված է Բաթումում ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչության գործունեությունը և Հայաստանի տնտեսության համար Բաթումի նշանակությունը: «Բաթումը խոշոր առևտրական կենտրոն է, որտեղ խաչվում են Անդրկովկասից,

Պարսկաստանից, Թուրքիայից, Արևմուտքից և Ռուսաստանից եկող տնտեսական հոսանքները»[13], - նշում էր տնտեսական ներկայացուցիչը: Հայաստանը, ըստ նրա, ավելի, քան Անդրկովկասյան մյուս հանրապետությունները, զգում է Բաթումի կարիքը: Առանց Բաթումի հնարավոր չէ Հայաստանի առևտրատնտեսական կյանքի զարգացումը: ՀՍԽՀ տնտեսական ներկայացուցչությունը տեղեկություններ էր հաղորդում Բաթումի, արևմտյան և ռուսական մերձծովյան շրջաններում տիրող վիճակի մասին: Տնտեսական ներկայացուցչության մյուս կարևոր խնդիրը գաղթականների հարցն էր: Բաթումում գտնվող գաղթականների վիճակը ծայրահեղ ծանր էր, և տնտեսական ներկայացուցչությունն ակտիվ գործունեություն էր ծավալում գաղթականներին օգնելու համար:

Խորհրդային Հայաստանը և Վրաստանը ակտիվորեն համագործակցում էին նաև Անդրֆեդերացիայի շրջանակներում: Վրաստանի խորհրդայնացումից հետո անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար օրակարգային հարց դարձավ միավորումը, որը հետապնդում էր և՛ քաղաքական, և՛ տնտեսական նպատակներ: Անդրկովկասի տնտեսական միավորման գործընթացը սկսվեց երկաթուղուց: Պատճառն այն էր, որ երկաթուղին ուներ ռազմավարական նշանակություն, և նրանով բեռների անխափան տեղափոխումը տնտեսական ոլորտում անպայման պիտի հանգեցներ հաջողությունների: Անդրկովկասում երկաթուղու երկարությունը կազմում էր մոտ 2000 կմ, որի գրեթե կեսը գտնվում էր Վրացական ԽՍՀ-ի տարածքում, այդ իսկ պատճառով երկաթուղու միավորման ջատագովները հիմնականում վրացիներն էին: Մարտի 8-ին Վրաստանի կոմկուսի կենտկոմի և Հեղկոմի միացյալ նիստում որոշում է ընդունվում «անդրկովկասյան հանրապետությունների երկաթգիծը առավել ճիշտ շահագործման և ղեկավարման նպատակով անհրաժեշտ մեկ ընդհանուր ղեկավարությամբ միավորելու»[14]:

Այսպիսով՝ Անդրկովկասում ամենից երկար երկաթգիծը և Թիֆլիսում անդրկովկասյան մասշտաբի միակ երկաթուղային արհեստանոցները ունենալով, Վրաստանը գերիշխող դիրք էր գրավում երկրամասում:

1922 թ. մարտի 12-ին հաստատվեց դաշնակցային պայմանագիր Անդրկովկասի երեք հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված կոնֆերանսի ժամանակ, որի արդյունքում հիմք դրվեց Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությանը (ԱԽՍՀՖՄ): Այս միավորումը ուներ նաև տնտեսական նպատակ, որն առաջին հերթին պետք է իրականացվեր երկաթուղիների ու արտաքին առևտրի միավորումից: Հանրապետությունները միմյանց կապող հաղորդակցության միակ միջոցը երկաթուղին էր, որը գտնվում էր ծայրաստիճան վատ վիճակում: Դրա պատճառները մի քանիսն էին. նախ և առաջ վառելիքը տրամադրում էր Բաքուն, իսկ վերանորոգման աշխատանքներն իրականացվում էին Թիֆլիսում: Վառելիքի բացակայության կամ գնացքների անսարքության պատճառով երթևեկությունը երկաթուղով շատ հաճախ չէր կատարվում ըստ նախատեսված գրաֆիկի: Այս խնդիրները լուծելու միակ ճանապարհը երկաթուղիների ցանցի միավորումն էր: Երկաթուղային ցանցի միավորումը և վերը նշված պատճառների վերացումը չէին կարող իրենց դրական ազդեցությունը չունենալ նաև արտաքին առևտրի զարգացման վրա: Եթե շահեկանության տեսանկյունից զուգահեռներ անցկացնենք Անդրֆեդերացիայի ստեղծման և արտաքին առևտրի զարգացման միջև, ապա ակնհայտ է դառնում, որ Միության ստեղծումով արտաքին առևտուրն ավելի շատ շահեց, քան տուժեց: Կենտրոնացվում են երեք հանրապետությունների վայրուտային միջոցները և արտասահմանյան երկրների հետ առևտրի վերաբերյալ բանակցություն-

ներն արդեն սկսվում են տարվել մեկ կետից:

Արտաքին առևտրի միացյալ մարմին ստեղծելու վերաբերյալ 1921 թ. հունիսի 2-ին Բաքվում ստորագրվում է համաձայնագիր անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների ղեկավարներ Ֆ. Մախարաձեի, Ալ. Մյասնիկյանի և Ն. Նարիմանովի կողմից: Նոր ձևավորված մարմինն անվանվում է «Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միություն՝ արտաքին առևտրի համար», իսկ վերջինիս նստավայր դառնում է Թիֆլիսը:

Ելնելով Միացյալ արտառևտրի գործունեության հետագա բարելավման, ինչպես նաև այդ օրգանի և առանձին հանրապետությունների հարաբերությունների կոնկրետացման անհրաժեշտությունից՝ 1921 թ. նոյեմբերին Թիֆլիսում գումարված երեք հանրապետությունների կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանսը որոշում է փոփոխություններ մտցնել հունիսի 2-ի պայմանագրի մեջ և այդ մասին առանձին դեկրետ է ընդունում: Դեկրետը, որի տակ ստորագրել էին Վրաստանի Հեղկոմի նախագահ Մախարաձեն, Ադրբեջանի Ժողկոմխորհի նախագահ Նարիմանովը և Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Մյասնիկյանը, բաղկացած էր 8 կետից: Այնտեղ ասվում էր, որ Միացյալ արտառևտրին է վերապահվում արտասահմանյան շուկայում պայմանավորվող հանրապետությունների արտահանության ֆոնդը կազմող բոլոր ապրանքների վաճառքի և այդ հանրապետությունների առանց բացառության բոլոր հիմնարկների և հաստատությունների համար գնման բացառիկ իրավունքը:

Այս դեկրետի նորույթը կայանում էր նրանում, որ հանրապետությունների համար գնումները պետք է համապատասխանեին նրանց վայրուտային ռեսուրսներին, մինչդեռ հունիսի 2-ի համաձայնագրով գնված ապրանքների բաշխումը պետք է կատարվեր ըստ հանրապետությունների ներկայացրած պահանջների ու ձեռնարկությունների հարվածայնության աստիճանի: Նման փոփոխությունն արդյունք էր այն դժգոհության, որ դրսևորվել էին հատկապես Ադրբեջանում և մասամբ Վրաստանում՝ բաշխման նախկին սկզբունքի դեմ: Դեկրետը «Միացյալ արտառևտրին» էր վերապահում ընդհանուր ղեկավարությունը հանրապետությունների արտահանության և ներմուծման պլանների մշակման, մաքսային քաղաքականության, կոնցեսիաների մասին արտասահմանյան ֆիրմաների և առանձին անձանց հետ բանակցություններ վարելու հարցում: Դեկրետում կետեր կային նաև կազմակերպական նախահաշվի, Միացյալ արտառևտրի և բանվորագյուղացիական տեսչության ու առանձին ժողկոմատների միջև հարաբերությունների մասին և այլն[15]: Իսկ նույն տարվա դեկտեմբերին անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների Կոնֆերանսը որոշում է ստեղծել Օբվնեշտորգը՝ Միացյալ արտաքին առևտրի վարչությունը[16]: Վերջինս օժտված էր Անդրկովկասից ապրանքների արտահանման բացառիկ իրավունքով: Օբվնեշտորգը նաև արտասահմանում կատարելու էր անդրկովկասյան ձեռնարկությունների համար անհրաժեշտ բոլոր գնումները: Նա նաև երեք հանրապետությունների համար պետք է մշակեր ներմուծման-արտահանման պլան: Նշվում էր նաև, որ ներքին ապրանքաշրջանառության հետ Օբվնեշտորգը ոչ մի առնչություն չպետք է ունենար[17]:

1922 թ. փետրվարին Օբվնեշտորգի կոլեգիայի անդամ Բեկզադյանը հեռագիր է ուղարկում Կովբյուրո, որտեղ գրում էր. «1921 թ. նոյեմբերին Թիֆլիսում կայացած Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների մաքսային կոնֆերանսը որոշել է Անդրկովկասի եվրոպական (Սևծովյան) սահմանի համար միասնական սակագին սահմանել: Միաժամանակ Կոնֆերանսը որոշել է հանձնարարել Օբվնեշտորգին մաքսային սակագնի նախագիծը համաձայնեցնել ՌՍՖԽՀ Արտառժողկոմատի հետ: Դեկտեմբերին Օբվնեշտորգի ներկայացուցիչները Մոսկվայում պայմանագիր են ստորագ-

րել, համաձայն որի՝ 1) Ոչ խորհրդային հանրապետությունների և Անդրֆեդերացիայի սահմանների վրա խորհրդային երկրների համար պետք է լինի միասնական սակագին: 2) Մինչև ընդհանուր խորհրդային սակագնի ներդնումը, Անդրֆեդերացիան պետք է ժամանակավորապես իր սակագինը մտցնի: 3) Անդրկովկասյան Կոնֆերանսի կողմից ներկայացված նախագիծը պետք է լրամշակման ենթարկվի, և բացի այդ, պետք է նվազագույնի հասցվի անմաքս ապրանքների ներմուծումը: Այժմ Օբվնեշտորգի հատուկ հանձնաժողովում այդ աշխատանքներն ավարտված են: Օբվնեշտորգի Կոլեգիան, ներկայացնելով նոր նախագիծ, խնդրում է Կովբյուրոյին նպաստել նոր սակագնի հաստատմանը անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների կողմից: Մինչև ընդունումը Օբվնեշտորգի Կոլեգիան խնդրում է Կովբյուրոյին թույլատրել կիրառել նոր սակագինը: Բացի այդ Օբվնեշտորգը խնդրում է թույլատրել աշխատանքներ սկսել նաև Ասիական (Թուրքիա և Իրան) սահմանի համար նոր սակագին մտցնելու ուղղությամբ»[18]:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ նշված հեռագրին Կովբյուրոյի պատասխանը Հայաստանի ազգային արխիվում հայտնաբերել չհաջողվեց:

Արտաքին առևտուրը միացնելուն զուգընթաց անհրաժեշտ էր մշակել միասնական մաքսային քաղաքականություն ինչպես եվրոպական, այնպես էլ պարսկական ու թուրքական շուկաների հետ հարաբերությունների համար: Դրան էր միտված հոկտեմբերի 26-ին Թիֆլիսում կայացած մաքսային խորհրդակցությունը, որը հրավիրվել էր միացյալ արտաքին առևտրի նախարարությամբ: Մասնակցում էին միացյալ արտաքին առևտրի կոլեգիայի նախագահ Ռաբինովիչը, անդամներ Կոլոմիյցևն ու Մեդիչին, Անդրկովկասում ՌՍՖԽՀ արտաքին առևտրի ժողկոմատի ներկայացուցիչ Բրեսլավը, Վրացական ԽՍՀ ֆինժողկոմատի ներկայացուցիչներ Ալշիբայան և Միքաձեն, Ադրբեջանական ԽՍՀ-ից՝ Հաջիևը, Գոլովինը և Լեբեդևը, ՀՍԽՀ-ից՝ Ա. Բեկզադյանը և Աբրահամյանը, ՌՍՖԽՀ Ցենտրոսոյուզից՝ Դյադկինը, ինչպես նաև հրավիրված մասնագետներ[19]:

Տնտեսական համագործակցության արդյունքներն ամփոփվեցին, և հետագա անելիքները նախանշվեցին 1921 թ. օգոստոսի 12-14-ը Թիֆլիսում գումարված Կովկասյան երկրամասային կուսակցական առաջին խորհրդակցությունում, որի աշխատանքներին մասնակցում էին նաև արհմիությունների և կարմիր բանակի ներկայացուցիչները[20]: Այդտեղ Գ. Օրջոնիկիձեն մասնավորապես շեշտեց այն պարագան, որ Կովկասը տնտեսական տեսանկյունից իրենից ներկայացնում է «միասնական ամբողջական ու անբաժան կազմակերպություն»[21]: Այս տեսակետները բոլորին չէ, որ բավարարում էին: Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական միավորմանը դեմ էին Մդիվանին և նրա համախոհները: ՌԿ(բ)Կ Կենտկոմ գրած նամակում, կասկածանք հայտնելով տնտեսական միավորման արդյունավետության հարցում, նրանք հայտնում էին, որ միասնական մարմնի ստեղծումը կառաջացնի կազմակերպչական խառնաշփոթ և կնպաստի հակահեղափոխական ազգայնական ուժերի աճին:

Բ. Մդիվանին, 1923 թ. մարտի 19-ին ելույթ ունենալով Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրորդ համագումարում, տնտեսական միավորման հարցի մասին խոսելիս արտահայտում է այն միտքը, թե տնտեսական տեսակետից ոչ մի անհրաժեշտություն չկա միավորելու Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները, որովհետև երկրամասի տնտեսական կառուցվածքը նույնն է, իսկ եթե տնտեսության հիմնական ճյուղերը նման են, ապա ինչու այդ դեպքում կատարել միավորում, այլ ոչ թե թողնել, որ նրանք որպես առանձին միավորներ ուղղակիորեն կապվեն խորհրդային Ռուսաստանի հետ[22]:

Սակայն պետք է նշել, որ երեք հանրապետությունների տնտեսական սերտ փոխ-

հարաբերությունների ապացույց էին միասնական երկաթուղին, Բաքու-Բաթում նավթամուղը, Բաթումի նավահանգիստը, Հայաստանով Պարսկաստան գնացող առևտրական ճանապարհը, ընդհանուր արոտավայրերը, ջրերը, անտառները և այլն: Հայաստանը և Ադրբեջանը միշտ զգացել են Վրաստանի նավահանգիստների կարիքը, իսկ Ադրբեջանը՝ Հայաստանի արոտավայրերի, ջրերի և անտառների կարիքը: Ադրբեջանը չէր կարող զարգացած անասնապահություն ունենալ առանց Հայաստանի արոտավայրերի, իսկ Հայաստանը և Վրաստանը չէին կարող զարգացնել իրենց տնտեսությունը առանց Ադրբեջանի նավթի:

Տնտեսական ոլորտում անդրկովկասյան երեք հանրապետությունների համագործակցությունը որոշակի առումով լուծում էր նաև քաղաքական խնդիրներ, քանի որ թուլացնում էր երեք ժողովուրդների միջև առկա ազգային հակասությունները, ինչը միմիայն դրական գնահատականի է արժանի: Ի պատասխան Մդիվանու և նրա կողմնակիցների՝ Կիրովը, անդրադառնալով հատկապես հայ-ադրբեջանական հարաբերություններին, նշում էր, որ տնտեսական համագործակցությունը կմեղմացներ երկու ժողովուրդների միջև առկա լարվածությունը:

Ամփոփելով տնտեսական և կուսակցական խորհրդակցությունների արդյունքները և իրավիճակը՝ Կովկասյան բյուրոն որոշեց ստեղծել Անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական բյուրո, որը Անդրկովկասի մասշտաբով տնտեսության ոլորտում պետք է խաղար այն դերը, ինչ կուսակցական և ընդհանուր բնագավառում խաղում էր Կովկասյան բյուրոն: Այս որոշումը հավանություն ստացավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի 1921 թ. օգոստոսի 24-ի նիստում: Անդրկովկասի միավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ 1921 թ. նոյեմբերի 3-ին Բաքվում կայացած ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը: Նրան մասնակցում էր երեք հանրապետությունների կուսակցական ակտիվը: Պլենումին մասնակցում էր նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովը: Այնտեղ Անդրկովկասի հանրապետությունների մասին զեկույց ներկայացրեց Շ. Էլավիան: Նա և Ալ. Մյասնիկյանը պլենումին ներկայացրին մի բանաձև, համաձայն որի «անդրկովկասյան հանրապետությունների անջատ քաղաքական գոյությունը նրանց թուլացնում է կապիտալիստական երկրների առջև, և նրանց քաղաքական սերտ միությունը կծառայի ամուր երաշխիք արտաքին հակահեղափոխական ուժերի կողմից հարձակման դեպքում, և արդյունքում Մերձավոր Արևելքում խորհրդային իշխանությունը կամրապնդվի»[23]: Այդ պլենումում որոշվում է ստեղծել երկրամասի վարչաքաղաքական կենտրոնական մարմին՝ Միութենական խորհուրդ: Դրա համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց Շ. Էլավիան: Անդամներ դարձան Լեգրանը, Լուկաշինը, Եգորովը և Էֆենդիևը[24]: Այդտեղ որոշում ընդունվեց նաև վերացնել Անդրկովկասի հանրապետությունների միջև գործող դիվանագիտական ներկայացուցչությունները:

1922 թ. մարտի 27-ին տեղի է ունենում Անդրֆեդերացիայի Դաշնակցային Խորհրդի անդրանիկ նիստը: Նիստը նախագահում է Ալ. Մյասնիկյանը: Հաստատվում է խորհրդի նախագահության ընթացակարգը, համաձայն որի՝ նախագահության անդամներից յուրաքանչյուրը, ով համապատասխանաբար ներկայացնում էր անդրկովկասյան հանրապետություններից մեկը, նախագահելու էր 4 ամիս ժամկետով: Հուլիսի 5-ին լրանում է Մյասնիկյանի նախագահության ժամկետը և դաշնային խորհրդի որոշմամբ հուլիսի 6-ից Խորհուրդը նախագահում է Ն. Նարիմանովը: Դեկտեմբերի 4-ին նրան փոխարինում է Շ. Էլիավան, որը նախագահում է մինչև 1923 թ. հունվարը, այսինքն՝ մինչև Դաշնակցային Խորհրդի գոյության ավարտը[25]:

1922 թ. հուլիսի 4-ին Դաշնակցային Խորհուրդը ձևավորում է Բարձրագույն

տնտեսական խորհուրդ (ԲՏԽ), որի ղեկավար է նշանակվում Ալ. Մյասնիկյանը, իսկ տեղակալներ՝ Հաջինսկին և Թորոշելիձեն: Անդրֆեդերացիայի 10 ժողկոմներից 4-ը անդրբեջանցիներ էին, 3-ական հայեր և վրացիներ: Միացյալ ժողկոմատներ ձևավորելիս առաջնորդվում են հետևյալ սկզբունքով. պարտադիր կերպով ժողկոմը և նրա տեղակալը չեն կարող լինել նույն հանրապետությունից[26]:

Ինչ վերաբերում է Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությանը, ապա վերջինս 1922 թ. դեկտեմբերի 30-ին մտավ ԽՍՀՄ-ի կազմի մեջ՝ դառնալով նրա հիմնադիր հանրապետություններից մեկը: ԱԽՖՍՀ-ն իր գոյությունը ԽՍՀՄ-ի կազմում պահպանեց մինչև 1936 թ.:

Պետք է նշել, որ, չնայած դժվարություններին, Հայաստանի իշխանությունները ամեն ջանք գործադրում էին Վրաստանի հետ քաղաքական և տնտեսական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, ինչը տվեց իր ցանկալի արդյունքը՝ Հայաստանն անհրաժեշտ ապրանքներով ապահովելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ., Եր., 2002, էջ 8:
2. Նույն տեղում, էջ 106:
3. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999, էջ 146:
4. Ղազախեցյան Վլ. Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006, էջ 126:
5. Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921թթ, էջ 197:
6. ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), ֆ.114, g.2, գ.49, թ.2:
7. «Աշխատավոր», N 3, 5 հունվարի, 1921թ:
8. ՀԱԱ, ֆ.114, g.2, գ.61, թ.11:
9. Նույն տեղում, թ. 16:
10. ՀԱԱ, ֆ.114, g.1, գ.42, թ.29, տես նաև նույն տեղում, գ.44, թ.32:
11. Տե՛ս նույն տեղում , գ.83, թ.13:
12. ՀԱԱ, ֆ.114, g.1, գ.42, թ.107:
13. Նույն տեղում , գ.258, թ.3-5:
14. Хармандарян С. Ленин и становление Закавказской федерации (1921-1923гг.), Ер., 1969, стр. 126
15. Զոհրաբյան Է. Ա., Անդրկովկասյան հանրապետությունների արտաքին առևտրի միավորման պատմությունից (1921 թ. ապրիլ-1922 թ. մարտ), Բանբեր Երևանի Համալսարանի, N 3 (51), Եր., 1983, էջ 187:
16. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 366, g.1, գ. 5, թ. 20:
17. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 366, g.1, գ. 5, թ. 80:
18. ՀԱԱ, ֆ. 366, g.1, գ. 5, թ. 210:
19. Տե՛ս ՀԱԱ, ֆ.115, g.1, գ. 83, թ. 7:
20. Տե՛ս ՀԱԱ ֆ.113, g. 3, գ. 4, թ.13-16:
21. «Խորհրդային Հայաստան», N 156, 25 օգոստոսի, 1921:
22. Վարդգեսյան Գ. Հ., Անդրկովկասյան հանրապետությունների համագործակցությունը 1921-1923թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, N 6, Եր., 1965, էջ 6:
23. «Խորհրդային Հայաստան», N 223, 16 նոյեմբերի, 1921:

24.Նույն տեղում:
25.Хармандарян С. В., Укрепление Закавказской Федерации в 1922г., Լրաբեր հասարակական գիտությունների, N8, Եր., 1969, էջ17:
26.Նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Հայ-վրացական հարաբերությունները 1921-1922թթ.
Գրիգոր Բալասանյան

1918թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը լուծարվեց, և մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց անկախ պետություն: Հայաստանի հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկն էր բարելավել հարաբերությունները հարևանների հետ: Ինչևէ, գոյություն ունեին տարածքային խնդիրներ հարևանների հետ՝ այդ թվում Վրաստանի հետ: 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, և տարածքային խնդիրները փոխանցվեցին խորհրդային Հայաստանին: Խորհրդայնացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց Լոռու չեզոք գոտու հիմնախնդրի խաղաղ կարգավորման համար: Բացի քաղաքական հարաբերություններից, 1921-1922թթ. գոյություն ունեին ակտիվ առևտուր և տնտեսական հարաբերություններ: Բաթումի նավահանգիստը անփոխարինելի նշանակություն ուներ Հայաստանի տնտեսության և տնտեսական զարգացման համար:

Բանալի բառեր՝ *Հայաստան, Վրաստան, հարաբերություններ, Խորհրդային Ռուսաստան, Լոռի, առևտրատնտեսական կապեր*

РЕЗЮМЕ
Армяно-грузинские отношения 1921-1922гг.
Григор Баласанян

26-го мая 1918 года Закавказский Сейм распался, а 28-го мая Армения объявила о своей независимости. Одной из наиважнейших задач внешней политики Республики Армения стало урегулирование отношений с соседями. У Армении имелись территориальные проблемы с соседями. Грузия не была исключением. 2-го декабря 1920 года в Армении установилась Советская власть, и территориальные проблемы были переданы Советской Армении. Советизация создала благоприятные условия для мирного урегулирования проблемы нейтральной зоны Лори. Кроме политических отношений, в 1921-1922 гг. между государствами имелись активные экономические отношения, велась активная торговля. Порт Батуми имел незаменимое значение для экономики и экономического развития Армении.

Ключевые слова: *Армения, Грузия, отношения, Советская Россия, Лори, торгово-экономические связи.*

SUMMARY
Armenian-Georgian Relations in 1921-1922
Grigor Balasanyan

On 26 May 1918 the Transcaucasian Seimas was dissolved and on May 28 Armenia was declared an independent republic. One of the most important issues of foreign policy of the Republic of Armenia was the normalization of relations with neighbors. However, there were territorial disputes with neighbors, including Georgia. On 2 December 1920 Armenia was declared a soviet republic and the territorial disputes passed to the Soviet Armenia. The sovietazation created favorable conditions for peaceful resolution of the issue of Lori's neutral zone. Besides political relationships, active trade and economic relations existed in 1921-1922. The port of Batumi was of utmost importance for Armenia's economy and necessary for economic development.

Keywords: *Armenia, Georgia, relations, The Soviet Russia, Lori, trade and economic ties*.